ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Լ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան.

Ի պատասխան Ձեր 24.12.2018թ. հ.01/42 գրության՝ տեղեկացվում է.

«Երևանտրանս» ՓԲ ընկերությունում կազմակերպվել է քննարկում Երևանի ներհամայնքային երթուղիներն սպասարկող բոլոր ընկերությունների պատասխանատու անձանց մասնակցությամբ: Քննարկման առարկա են դիտարկվել վերգետնյա հանրային տրանսպորտում առկա բազմաբնույթ բացթողումները, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների արտաքին տեսքի, ուղեսրահի կահավորանքի և սանիտարական ոչ բարվոք վիճակը, վարորդների ոչ բարեկիրթ վերաբերմունքը ուղևորների նկատմամբ, ի թիվս այլ խնդիրների՝ նաև սպասարկման ընթացքում բջջային հեռախոսից օգտվելու, բարձր երաժշտություն միացնելու և այլ արատավոր երևույթները, որոնք առաջացնում են քաղաքացիների արդարացի դժգոհությունը: Չնայած առկա խնդիրները գտնվել են մշտական ուշադրության կենտրոնում՝ սպասարկող կազմակերպությունները պարբերաբար զգուշացվում են՝ ուշադրություն դարձնել առկա բացթողումների վերացմանը, «Երևանտրանս» ՓԲ ընկերության կողմից պարբերաբար անցկացվող ստուգայցերի ընթացքում հայտնաբերված յուրաքանչյուր դեպքի համար վարորդների նկատմամբ կիրառվում են սպասարկող կազմակերպությունների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի պահանջներին համապատասխան տուգանքներ, ճանապարհային ոստիկանության մարմինների կողմից կիրառվում են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով նախատեսված վարչական ներազդեցության միջոցներ, այդուհանդերձ, արատավոր երևույթները պարբերաբար կրկնվում են և ցանկալի արդյունք չի արձանագրվում: Նշված նկատառումներից ելնելով՝ հրավիրված քննարկման ժամանակ հանձնարարվել է բոլոր փոխադրող ընկերություններին վերստին հրահանգավորել սպասարկման ոլորտում ներգրավված բոլոր վարորդներին՝ բացառելու վերոնշյալ արատավոր երևույթները, գործընթացը պահել ամենօրյա հսկողության տակ, հայտնաբերված յուրաքանչյուր դեպքի համար ձեռնարկել ներազդեցության բոլոր հնարավոր միջոցները:

Միաժամանակ տեղեկացվում է, որ հանձնարարվել է «Երևանտրանս» ՓԲ ընկերության տնօրինությանը՝ բարձրացնել ձեռնարկվող միջոցառումների արդյունավետությունը և ենթակա ստորաբաժանումների հետևողականությունն առկա արատավոր երևույթները բացառելու ուղղությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ